CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

AMBASSADE
DE FRANCE
EN ARMÉNIE
Liberté
Égalité
Fraternité

ՆԻՆԱ ԽԵՄՉՅԱՆ

# Արձագանք
# Echo

NINA KHEMCHYAN

2022

Երևան | Yerevan



2022 թվականի սեպտեմբերի 23-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան հետ համագործակցությամբ, բացվեց «Նինա Խեմչյան. Արձագանք» ցուցադրությունը:

Ոգեշնչված Մեսրոպ Մաշտոցի շարականներով՝ արվեստագետը ներկայացնում է 11 յուրօրինակ գնդաձև քանդակներ, պարուրված շարականների ոսկետառ բովանդակությամբ: Այդ աշխատանքներին բացառիկ հոգևոր շունչ է հաղորդում երգչուհի Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանը, ում կատարմամբ սրահում անընդհատ հնչող շարականները կենդանացնում են Նինա Խեմչյանի քանդակները:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնը չափազանց կարևորում է այս նախագիծը, քանզի այն հոգու արթնացման իրական խթան է հանդիսանում անհատական և հանրային մակարդակներում: Նախագիծը Կենտրոնի համար նաև խորհրդանշական է՝ պայմանավորված Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբենը» որմնանկարի մշտական ցուցադրությամբ:

Հավատարիմ իր առաքելությանը՝ Գաֆէսճեան արվեստի կենտրոնը շարունակում է ժամանակակից արվեստի առաջատար միտումները ներկայացնել Հայաստանում, ինչպես նաև աշխարհին ներկայացնել հայկական մշակույթի լավագույնը:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում արվեստագետ Նինա Խեմչյանին և երգչուհի Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանին:

Համագործակցության համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը՝ ի դեմս դեսպան Ն.Գ. Անն Լույոյի:

Ցուցադրության կազմակերպման և իրականացման համար իմ շնորհակալությունն եմ հայտնում Գաֆէսճեան արվեստի կենտրոնի անձնակազմին, ում նվիրումի և ջանքերի շնորհիվ կենտրոնը շարունակում է կյանքի կոչել Գաֆէսճեան ժառանգության տեսլականը Հայաստանում:

**Վահագն Մարաբյան**

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի գործադիր տնօրեն



## ԱՆԿԱՆԻՄ ԱՌԱՋԻ ՔՈ

Անկանիմ առաջի Քո
եւ խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց.
մի՛ անտես առներ, Հա՛յր, զաղաչանս իմ:

Աղաղակեմ որպէս մաքսաւորն,
եւ հեղում զարտասուս իմ առաջի Քո, որպէս պոռնիկըն.
մի՛ անտես առներ, Հա՛յր, զաղաչանս իմ:

Յանհերեւոյթ թըշնամւոյն պարտեցայ
եւ ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ,
մի՛ անտես առներ, Հա՛յր, զաղաչանս իմ:



## ՈՂՈՐՄԵԱ՛ ԻՆՁ, ԱՍՏՈՒԱ՜Ծ

Ողորմեա ինձ Աստուա՜ծ:

Ի լըսել ըզձայն փողոյն յահագին աւուրն,
յորժամ հարկանէ հրեշտակապետըն
եւ կոչէ ի դատաստան,
ողորմեա՛ ինձ, Աստուա՜ծ:

Ի նըստիլ Քո յատենի, Դատաւո՜ր ահեղ,
յորժամ առնես հրափորձութեամբ
ըզքըննութիւն որդւոց մարդկան,
ողորմեա ինձ, Աստուա՜ծ:



## ԾՈՎ ԿԵՆՑԱՂՈՅՍ ՀԱՆԱՊԱԶ ԶԻՍ ԱԼԵԿՈԾԷ

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:

Մըրըրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ:

Նաւապե՛տ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւէն:

Ի համբառնալ իմում առ Քեզ զաչս իմ՝
օգնեա՛ ինձ, Տէ՛ր:

Ի յօրհնութիւն նոր օրհնեսցուք ըզՔեզ,
Քրիստո՛ս՝ Փըրկիչ մեր:

Այցելու՛ մեր և Փըրկի՛չ,
կեցո՛ զանձինըս մեր:





**Nina Khemchyan** (1964, Erevan) est une artiste arménienne basée à Paris. Diplômée de l'Académie Nationale des Beaux-Arts d'Erevan, en Design industriel, Nina a présenté ses œuvres dans de nombreuses galeries en Arménie depuis le début des années 1990. Après avoir déménagé en France, elle poursuit ses études à l'Ecole Nationale des Arts Appliqués et Métiers d'Arts de Paris de 1996 à 1998. Cela fait plus de trente ans que l'artiste travaille comme sculptrice et artiste graphique. Elle a participé à des dizaines d'expositions collectives, des foires d'art et des festivals et a présenté des expositions personnelles en Arménie, dans plusieurs villes en France, y compris d'importants musées et galeries à Paris, aux Etats-Unis, Belgique, en Italie et au Liban. Les œuvres de Nina Khemchyan sont conservées dans de nombreux collections privées en Arménie et à l'international et font parties des collections du Musée d'art moderne d'Erevan et du Musée Sergei Parajanov.

Երախտիքի խոսք.
Ցուցադրության կազմակերպման համար՝
Գաֆէսճեան արվեստի կենտրոնին
Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը

Տեխնիկական աջակցության համար՝
«Շաղլ Շմիթ և Սի» գեղարվեստական բրոնզագործության արհեստանոցին և Քսավյե Կանամերասին՝ անտեսանելի կախիչ և փայլեցված արույրից դեկորատիվ գմբեթ պատրաստելու համար
«Թենմոկու» խեցեգործական արվեստանոցին և Աննա Կլեր Մարտինի՝ քանդակների թրծման աշխատանքների համար

Acknowledgements:
For organizing the exhibition:
Cafesjian Center for the Arts
Embassy of France in Armenia

For technical support:
Ets Charles Schmidt et Cie fine art bronze studio and Xavier Canameras for making an invisible hanging system, topped with a decorative dome from polished brass
TENMOKU ceramic studio and Anne Claire Martin for clay firing

Remerciements:
Pour l'organisation de l'exposition:
Centre Cafesjian pour les Arts
Ambassade de France en Arménie

Pour le support technique:
Ets Charles Schmidt et Cie Bronzier d'Art. Sous la houlette de Xavier Canameras, ingénieux système de maintien invisible, coiffé d'une coupelle décorative en laiton poli.
Atelier TENMOKU - réalisation de cuissons par Anne Claire Martin

**Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանը** (ծնվ. 1978, Երևան) հայ հոգևոր երաժշտության ականավոր կատարողներից է: Կրթություն է ստացել Հայաստանի երգչախմբային ընկերությունում՝ ավարտելով դասական վոկալի բաժինը, ապա նույն մասնագիտությամբ սովորել է Երևանի Կոմիտասնի անվան պետական կոնսերվատորիայում: Սովորելուն զուգահեռ սկսել է աշխատել Հայաստանի պետական երգչախմբում և Գեղարդավանքի երգչախմբում: Կոնսերվատորիան ավարտելուն պես սկսել է ակտիվ հյուրախաղային գործունեությունը, որտեղ երգչուհին ներկայացրել է հայ հոգևոր և դասական երգարվեստը Հայաստանում, Եվրոպայի բազմաթիվ երկրներում, Ավտրալիայում և Կանադայում: Համագործակցել է բազմաթիվ կատարողների և կոմպոզիտորների հետ, որոնցից պետք է առանձնահատուկ նշել «Մաշտոց. Սրբազան մարգարիտներ» Վահան Արծրունու հետ համատեղ աշխատանքը (այդ ձայնասկավառակը 2019թ. նաև միացավ Rock Aid Armenia նախագծին, նախագծի հեղինակներ Ջոն Դիի, Յան Գիլանի («Deep Purple») և Թոնի Այոմիի («Black Sabbath») հրավերով): Բացի այդ, արժի նշել The Naghash Ensemble նախագիծը, որը հայ արմատներով ամերիկացի կոմպոզիտոր Ջոն Հոդիանը ստեղծել է հատուկ Հասմիկի ձայնի համար, և որը մեծ հաջողությամբ շրջում է գրեթե ամբողջ աշխարհով: Այժմ Հասմիկ Բաղդասարյան Դոլուխանյանը նաև երգում է իր երկար տարիների պատմություն ունեցող «Լույս» վոկալ հնգյակում, Հայաստանի տարբեր վանքերում ներկայացնելով հայ հոգևոր երաժշտության գոհարները և հանդիսանում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի համերգային ծրագրերի բաժնի ղեկավար:

**Hasmik Baghdasaryan-Dolukhanyan** (b. 1978, Yerevan) is one of the celebrated performers of Armenian sacred music. She received her education at the Choir Company of Armenia as a classical singer and then studied at the Yerevan State Conservatory after Komitas. Parallel to her studies she began working at the State Choir of Armenia and the Choir of Geghard Monastery. Since graduation the artist has begun an active touring career, presenting Armenian sacred and classical music not only in Armenia but in many European countries, Australia, and Canada. She has collaborated with many singers and composers, including working with Vahan Artsruni on the album *Mashtots: Sacred Pearls* (the record was also included in the project Rock Aid Armenia in 2019, following an invitation from founders of the project Jon